

ՍԼ.

Մէկ քանի քաղաքական դէպքերու քով՝ նաև հետաքրքրական է Մխիթար Աբրահօր Հոովմայ մէջ ուր բնական ըլլալու մասին յայտնուած կարծիք մը:

Գերապատիւ և ամենապաշտա տեսնել Ստեփաննոսի սարայի ողջոյն խոնարհական

... Ի թունուզէ պէյ մի տաճիկ թէքիրտաղցի հարուստ յոյժ՝ փախուցեալ ի սպանիայ ի բարկութենէ փաշայի տեղւոյն, որ կամէր զլիատել զնա վասն զրկանաց արարելոց, ընկալաւ շնորհս ի թագաւորէն, և նորա յանձնարարութեամբ առաքեցաւ ի Նափօլի մեծաւ պատուով. ընդ որում խուպեարօղլու ստեփանն բազում անգամ խօսեցաւ, որպէս պատմեաց մեզ. սա կամէր նախ գալ ի հոօմ. աստի ի վենետիկ. ի վենետիկէ ի վենայ, և ի վենայէ ի կոստանդնուպօլիս. սակայն նափօլիթանքն չկամեցան, այլ զրեցին ի ստամպօլ, զի ուղիղ նաւաւ յղեցեն զնա անդր: Գարձեալ աստ համբաւին թէ թագաւորն տաճկաց առաքեաց վասն երից փաշայից զլիատել զնոսա. երկուքն ի նոցանէ փախեան ի կողմանս վենետիկեցոց. մինն ապստամբեալ ժողովեաց զզլիսով իւրով քսան կամ երեսուն հազար զօրս. և արձանանայ նոքօք հանդերձ ընդդէմ թագաւորին, խնդրել զվրէժ քինուն արգարութեան: Զայս լուր նախ Ֆրէնկքն ասացին, սակայն ես ստեցի, բայց յետոյ եկն զիր ի ստամպօլէ, յորում այս պատմութիւն ճառի, որպէս և զրեցի: Տէր Գէորգն... զնաց բնակեցաւ ի փօնթէ սիսթօն... սակայն և անդ նեղի, զի ոչ ունի զգիւրութիւնն զոր ունէր ի հայոց ժամն, այլ և պարտի պահել զկանոն տեղւոյն, մանաւանդ յաւուրն մի ժամ առնել ի միասին զմտածական, քանզի այս է տեղի ինչ հասարակաց շինեալ իբրև զվանս, ընդ կառավարութեամբ սփօլօղից որք են փիարիսթայքն, որ մտեալ իբրև պանդուխտք բնակին պարկեշտ քահանայք, ևն, ուր և կարծեմ բնակիլ Մխիթար արքային, յորժամ եկն ի հոօմ:...

1760 Հոկտ. 4 | Հոովմ

հուստ ծառայ
Հ. Մկրտիչ (Անանեանց)

ՍԼԱ.

Յովսեպոսի պատմութիւնը «ՅԱՂԱԳՍ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՀՐԷԻՑ ԸՆԴ ՀՈՒՄԱՅԵՑԻՍ ԵՒ ԱԻԲԵՐՄԱՆ ԵՐՈՒՍԱՂՆՄԻ ԵՒ ՏԱՃԱՐԻՆ ՀՆՈՑ» լոյս տեսած է Էջմիածին 1787 թուականին, ձեռամբ Ստեփանոս Լեհացւոյ, որ լատիներէնէ ի հայ թարգմաններ է: Տպագրութեան Յիշատակարանին մէջ կ'ըսէ. «Է՛ր սա բարգմանեալ ի վաղևոյց ժամանակաց ի նախնի Վարդապետացն մերոց ի մեր լեզու և ի գիր», սակայն Լէնկթիմուրի և այլ հէներու ասպատակութեամբ ուրիշ շատ զրքերու հետ այդ ալ ջնջուած է. ուստի Լեհացին հարկ տեսեր է կրկին թարգմանել և հրատարակել (էջ 494):

Հետագայ մեր վաւերագրին մէջ, այսինքն յիշեալ տպագրութենէ 27 տարի առաջ, կը տեսնենք ուրեմն որ մեր նամակագիրը Աթանաս եպս. Առաքելական Փոխանորդ Հայ Կաթողիկոսաց ի Կ. Պոլիս՝ ի ձեռին ունի Յովսեպոսի սոյն պատմութեան հայ թարգմանութիւն մը, որուն տպագրութեան խնդրով ջերմօրէն կը զբաղի, և ինչ որ կը տեսնուի՝ ապարդիւն կը մնայ: Բայց ի՞նչ եղած է Աթանաս եպս.ի ունեցած հայ թարգմանութիւնը՝ չենք գիտեր: